<<ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ>>
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-22/08>> /04/

ք. Հրազդան «20» ապրիլ 2022թ.

Հրազդանի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Ս. Միքայելյանի,ի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ԽՈՑԱՆՔ >> ՍՊԸ ն, ի դեմս տնօրեն Է.Հովսեփյանի,** որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **<<Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական>> աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ զրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և

պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **5 020 000/հինգ միլիոն քսան հազար /ՀՀ դրամ** :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Հաշվի առնելով այն հանգամանքը , որ մինչև Պայմանագրի կնքումը Պատվիրատուի մոտ հաստատվել են ֆինանսական միջոցները, ուստի կողմերի միջև համաձայնագիր չի կնքվի:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հրազդանի համայնքապետարան	«Խոյանք» ՍՊԸ
ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք	Ք. Հրազդան, Մաքրավան փող., Ն. Շնորհալու 19
Հրազդանի ՏԳԲ	«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900122001713, 900122001663 900122001608	Հ/Հ 24127000598600
ՀՎՀՀ 03027114	ՀՎՀՀ 03018972
Համայնքի ղեկավար՝ __________ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ստորագրություն)	Տնօրեն __________ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1

«03» մայիս 2022թ.կնքված

«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ- 22/08» /04/ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	Միավորի գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
2	71241200	**<<Կոտայքի մարզի Հրազդան համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցման>> նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման խորհրդատվական աշխատանքներ** **2. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի** Հրազդան քաղաքի Հարավային, Կենտրոն, Վանատուր, Միկրոշրջան, Կոճռո թաղամասերի, Հայ Ֆիդայիներ փողոցի, ինչպես նաև Քաղսի գյուղի **արտաքին լուսավորության ցանցի կառուցում.** Նախատեսվում է Հրազդան համայնքի. Հրազդան քաղաքի • Կոճռո թաղամաս՝ 1000 գմ, • Կենտրոն թաղամաս՝ 705 գմ, • Վանատուր թաղամաս՝ 2500գմ, • Միկրոշրջան թաղամաս՝ 640 գմ • Հայ ֆիդայիների փողոց՝ 4280, • Աղբյուրակթաղամաս՝ 740 գմ, Քաղսի գյուղի՝ 4240 գմ: Մալուխների ընդհանուր երկարությունը կազմում է 14105 մ: Տեղադրվող լուսատուների համար պահանջվող բնութագրերը. • Հոսանքի լարումը /V/ – AC85-265	դրամ	620 000	1	620 000	Ըստ ներկայացված հասցեների	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացույցային օրում:**

		• Ցանցի հաճախականություն HZ/-50-60 • Սպառվող հզորությունը /W/ - 100 • Լուսային հոսք /Lm/- 14000 • Հզորության գործակից/Pf/ ≥0.98 • Գունահաղորդման ինդեքս/Ra/ - >80 • Գունային ջերմաստիճան/ K/ - 5000 • Ջերմադիմացկունություն C °/ - 20_+50 • Լույսի ճառագայթի անկյուն – 120 ° • Հոսանքի լարման աշխատանքային տիրույթը առնվազն 150-250 Վ, • Շրջակա միջավայրի ներգործությունից պաշտպանվածության աստիճան– IP 67 • Լուսատուի պահանջվող հավաստագրերը (ENEC, TUV, EAC և այլն):						
3	71241200	**<<Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի թիվ 11, մանկապարտեզի հիմնանորոգման ու վերանորոգման>> նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման խորհրդատվական աշխատանքներ** 1. Արտաքին պատերի տակ հիմքերի պաշտպանիչ բետոնե հարթակ, 2. Արտաքին պատերի վնասված և բացակայող քարերի վերականգնում, 3. Տանիքի կապիտալ վերանորոգում և ջրահեռացման համակարգի իրականացում, 4. Լուսային բացվածքների փոփոխություն ,պատուհանների և դռներ արդիականացում, 5. Բավարար պայմաններ սակավաշարժուն խմբերի համար, 6. Ջեռուցման համակարգերի կառուցում, 7. Ներքին հարդարման աշխատանքներ/անհրաժեշտության դեպքում միջնորմերի ձևափոխություն և վերականգնում/, 8. Գազամատակարարման համակարգ, 9. Ջրամատակարարման,ջրահեռացման և էլեկտրամատակարարման համակարգերի փոփոխություն, 10. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ըստ որակավորում ունեցող կազմակերպության կողմից տրված տեխնիկական եզրակացության: Թիվ 11 մանկապարտեզի շենքի օգտագործվող ներքին մակերեսը 2212,58 քմ է, 1-ին հարկի ծավալը՝ 2887,9 խմ, 2-րդ հարկի ծավալը՝ 2779,5 խմ, ընդհանուր հատակագծային	դրամ	1 400 000	1	1 400 000	Ըստ ներկայացված հասցեների	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացույցային օրում:**

		մակերեսը՝ 1375 քմ, տանիքի մա[illegible]դեսը՝ 926,49 քմ, հարկայնություն՝ բաղկացած է 2 մասնաշենքից, որոնք երկհարկանի են և իրար հետ կապված են միջանցքներով, կոնստրուկտիվ լուծումներ՝ քարե տուֆ, իսկ Օժանդակ կառույցներ առկա չեն:Համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման շենքը հանդիսանում է բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ IV կատեգորիա, ենթակա է համալիր փորձաքննության:						
4	71241200	**<<Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի թիվ 8 մանկապարտեզի հիմնանորոգման ու վերանորոգման» նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման խորհրդատվական աշխատանքներ4. Թիվ 8 մանկապարտեզում նախատեսվող աշխատանքները.** 1. Արտաքին պատերի տակ հիմքերի պաշտպանիչ բետոնե հարթակ, 2. Արտաքին պատերի վնասված և բացակայող քարերի վերականգնում, 3. Հին պատուհանների և դռներ արդիականացում, 4. Բավարար պայմաններ սակավաշարժուն խմբերի համար: 5. Ջեռուցման համակարգերի կառուցում, 6. Ներքին հարդարման շխատանքներ /անհրաժեշտության դեպքում միջնորմերի ձևափոխություն և վերականգնում /, 7. Գազամատակարարման համակարգ, 8. Ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրամատակարարման համակարգերի փոփոխություն, 9. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ըստ որակավորում ունեցող կազմակերպության կողմից տրված տեխնիկական եզրակացության: Թիվ 8 մանկապարտեզի շենքի օգտագործվող ներքին մակերեսը 1782,73 քմ է, 1-ին հարկի ծավալը՝ 2691,3 խմ, 2-րդ հարկի ծավալը՝ 2656,9 խմ, ընդհանուր հատակագծային մակերեսը 1320,0 քմ, տանիքի մակերեսը՝ 897,1 քմ է, 2 մասնաշենքից, որոնք իրար հետ կապված են միջանցքներով: Մասնաշենքերը երկհարկանի են: Նախագծային հզորությունը 250: Համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման շենքը հանդիսանում է բարձր ռիսկայնության աստիճանի	**դրամ**	**1 200 000**	**1**	**1 200 000**	**Ըստ ներկայացված հասցեների**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացույցային օրում:**

		օբյեկտներ՝ IV կատեգորիա, ենթ. [illegible]վա է համալիր փորձաքննության:						
5	71241200	**<<Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի թիվ 6 մանկապարտեզի հիմնանորոգման ու վերանորոգման>> նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման խորհրդատվական աշխատանքներ** 1. Արտաքին պատերի տակ հիմքերի պաշտպանիչ բետոնե հարթակ, 2. Արտաքին պատերի վնասված և բացակայող քարերի վերականգնում, 3. Տանիքի կապիտալ վերանորոգում և ջրահեռացման համակարգի իրականացում, 4. Բավարար պայմաններ սակավաշարժուն խմբերի համար: 5. Լուսային բացվածքների փոփոխություն, պատուհանների և դռների արդիականացում, 6. Ջեռուցման համակարգերի կառուցում, 7. Ներքին հարդարման աշխատանքներ /անհրաժեշտության դեպքում միջնորմերի ձևափոխություն և վերականգնում /, 8. Գազամատակարարման համակարգ, 9. Ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրամատակարարման համակարգերի փոփոխություն, 10. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ըստ որակավորում ունեցող կազմակերպության կողմից տրված տեխնիկական եզրակացության: Թիվ 6 մանկապարտեզի շենքի օգտագործվող ներքին մակերեսը 2826,06 քմ է, 1-ին հարկի ծավալը՝ 4713,4 խմ, 2-րդ հարկի ծավալը՝ 3966խմ, ընդհանուր հատակագծային մակերեսը 2290 քմ, տանիքի մակերեսը՝ 1608,66քմ է, բաղկացած է 7 մասնաշենքից, շինությունը երկհարկանի է, պատային կրող և միաձույլ ե/բ կարկասով կոնստրուկցիաներից է, միջհարկային ծածկերը հավաքովի անցքավոր ե/բ սալերից է, տանիքը ունի հարթ կառուցվածք, տանիքածածկը՝ իզոգմ: Համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման շենքը հանդիսանում է բարձր ռիսկայնության աստիճանի	դրամ	1 500 000	1	1 500 000	Ըստ ներկայացված հասցեների	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացույցային օրում:**

		օբյեկտներ՝ IV կատեգորիա, են, [illegible]կա է համալիր փորձաքննության:						
11	71241200	**<<Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի թիվ 1 երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման>> նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման խորհրդատվական աշխատանքներ** Հրազդան քաղաքի թիվ 1 երաժշտական դպրոցը երկհարկանի է, շինության ընդհանուր հատակագծային մակերեսը՝ 490.0քմ, ներքին օգտագործվող մակերեսը՝ 830քմ: Դպրոցում նախատեսվում է ջեռուցման համակարգի կառուցում: Ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտ՝ I կատեգորիա:	դրամ	300 000	1	300 000	Ըստ ներկայացված հասցեների	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացույցային օրում:**

Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001713, 900122001663
900122001608
ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար _____ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Խոյանք» ՍՊԸ
Ք. Հրազդան, Մաքրավան փող.,
Ն. Շնորհալու 19
«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24127000598600
ՀՎՀՀ 03018972

Տնօրեն _____ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ.